https://doi.org/10.52027/18294685-sna2023.2

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
Հայաստանի ազգային գրադարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԵՒ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ «ԴԻՒԱՆԸ»*

Բանալի բառեր՝ ձեռագիր գրառումներ, հնատիպ գիրք, յիշատակարաններ, կնքադրոշմներ, մագաղաթեայ պատառիկներ։
Keywords: handwritten notes, ancient book, colophons, seals, scraps of parchment.

ա. Արժէքն ու անհրաժեշտութիւնը

Հայերէն հնատիպ գրքի մատենագիտութիւնը [Ոսկանեան, Կորկոտեան, Սավալեան,1988, 864] տասնամեակներ շարունակ զգալի դերակատարում է ունեցել տպագիր գրքի պատմութեան համար։ Սակայն այդ մատենագիտութեան մէջ ներկայացուած չեն հայ գրքի էջերում զետեղուած ձեռագիր զանազան գրառումները եւ գրադարանային նշումները, որոնց պակասն այսօր նկատելի է, եւ դրանց վերհանումը արժէքաւոր ու կարեւոր է ոչ միայն գրատպութեան, այլեւ ընդհանրապէս պատմութեան, մասնաւորապէս՝ մշակոյթի պատմութեան համար։

Տպագիր գիրքը ստեղծելիս հրատարակիչներն ու հեղինակները հիմնականում այն կազմել են՝ հետեւելով ձեռագրերի ստեղծման աւանդոյթներին [Մանուկեան, Սարգսեան, 2022, 330]։ Զարմանալի չէ այս իրողութիւնը, քանի որ «ԺԶ-ԺԹ դարերի ամբողջ ընթացքում մեր ձեռագիր եւ տպագիր գրքերը կենցաղավարել են կողք կողքի՝ համատեղ, ծառայել են նոյն նպատակներին, կատարել նոյն գործառոյթները։ Անգամ՝ առանձին թերթեր կամ մասեր կորցրած պակասաւոր տպագիրները լրացուել-ամբողջացուել են ձեռագրերից ընդօրինակուած թերթերով, այլեւ՝ տպագիր գրքերից ձեռագրեր են օրինակուել. եւ այլն» [Տէր-Վարդանեան, 2022, 322]։

Մեր հնատիպ հրատարակութիւնները, բազմաթիւ այլ յատկանիշների շարքում, ձեռագիր գրքերից մասնաւորապէս փոխ են առել ազգային-մշակութային կերպարանք ստացած յիշատակարանային աւանդոյթը, որ տպագիր գրքերի մէջ գոյատեւել է նրանց հետագայ կեանքի ամբողջ ընթացքում։ Տարբեր ժամանակների տէրերն իրենց պատկանած գրքերի մէջ գրանցել են պատմական եւ մշակութային արժէք ունեցող յիշատակարաններ եւ մանր յիշատակագրութիւններ, որոնք, անկասկած, հաւասարարժէք են իրենց ժամանակակից ձեռագրական յիշատակարաններին։ Ինչպես ձեռագիր մատեաններում, այնպէս էլ հնատիպ գրքերում յիշատակարաններն ու յիշատակագրութիւնները տարբերւում են բովանդակային լայն բազմազանութեամբ. դրանցում կարելի է գտնել տարբեր ժամանակների պատմական, հասարակական, քաղաքական կյանքի մեծ ու փոքր իրադարձությունների մասին տեղեկութիւններ, տոհմական տարեգրութիւններ եւ նշանաւոր մարդկանց կենսագրական տուեալներ։ Ինչպես ձեռագրերում, հնատիպի դէպքում եւս այդ յիշատակարանների հեղինակները ոչ միայն տէրերն էին, այլեւ գնորդները, ստացողները, նորոգողներն ու նուիրատուները։ Ըստ այդմ, մեր պատրաստելիք «Դիւանը»[10] այսպիսի նիւթերի շնորհիւ ունենալու է ձեռագրական յիշատակարանների ստուար հատորներին մօտեցող արժէք։

Հնատիպ հրատարակութիւնների ունեցած ձեռագիր գրառումները, բացի տարբեր ուսումնասիրութիւնների համար աղբիւրագիտական արժէք ունենալուց, կարեւոր են նաեւ

[10] Հայաստանի ազգային գրադարանում 2023 թ. սեպտեմբերի դրութեամբ կայ 2392 միաւոր հնատիպ գիրք։

գրքերի հետագայ ճակատագրի առումով. սրանք բացայայտելու են ընթերցողի վերաբերմունքն ու հետաքրքրուածութիւնը գրքի, նրա պարունակած բնագրի նկատմամբ։

Հնատիպ գրքի էջերում, բացի տարատեսակ ու տարաբնոյթ ձեռագիր գրառումներից, հանդիպում են զգալի թով գրադարանային նշումներ, որոնք իրենց կարեւորութեամբ չեն զիջում յիշատակարաններին։ Գրքերում առկայ գրադարանային նշումները (կնքադրոշմներ[11], գոյքահամարներ եւ այլն) օգնելու են պատկերացնելու տարաբնոյթ (եկեղեցական, վանական, մասնաւոր, նաեւ դրանց ներկայ տէր) գրադարանների կառուցուածքն ու պարունակութիւնը՝ բովանդակային եւ քանակական առումներով։ Ամէն առանձին գրքի իրարայաջորդ տէրերի եւ նուիրատուների անունների բացայայտումով պարզուելու են նրանց գրքերի ապրած կեանքը, դրանց նկատմամբ եղած ընթերցողական պահանջմունքը, սրանց շնորհիւ՝ գրքի եւ մարդու կապի դրուագները, որով էլ պայմանավորուած հնարաւոր է լինելու դատողութիւններ անել հասարակական տարբեր խաւերի մէջ գրական մշակոյթի տարածման ծաւալների ու չափանիշների մասին։

բ. «Դիւանի» պատրաստման հակիրճ նկարագիրը

Այստէղ համառօտ ներկայացնում ենք մինչ օրս արուած աշխատանքը։ Այսպէս՝

1. թերթում ենք հայերէն հնատիպ գրականութեան բոլոր օրինակները,

2. վրիպումներից խուսափելու նպատակով գրքերի ստուգումները իրականացնում ենք ըստ ժամանակագրական կարգի, հաջորդիւ արձանագրում ենք անհատական համարը եւ գոյքահամարը, այնուհետեւ հեղինակի անունը, եթէ այն առկայ է, ապա՝ խորագիրը, վերջում՝ տպագրութեան վայրը եւ տարեթիւը,

3. նոյն հրատարակութեան բոլոր օրինակները տեղադրում ենք ըստ պարունակած նիւթի՝ գրառումների ժամանակագրական կարգով[12]. ըստ այսմ ձեռագրական, հնագրական, պատմական օժանդակ հնարաւոր բոլոր գիտելիքներով թուագրում ենք գրառումները,

4. ձեռագիր գրառումներ պարունակող գրքերի մէջ առկայ կնքադրոշմները, պիտակները եւ այլն նկարագրում ենք հնարաւոր համառօտ բնորոշումներով,

5. կնքադրոշմները[13] վերծանում ենք հնարաւոր ճշգրտութեամբ, զուգահեռաբար համարակալում եւ հաւաքում յաջորդաբար՝ առանձին ցանկերով[14],

6. գրառման կամ ներկայացուող նիւթի՝ գրքի մէջ զբաղեցրած տեղը (էջահամարը կամ թերթահամարը, անհրաժեշտութեան դէպքում նաեւ սկիզբն ու վերջը՝ էջ 5-10. ստորին լուսանց) անպայման նշում ենք, եթէ անգամ հրատարակութիւնն էջակալուած չէ, ապա այդ մասին ծանօթագրում ենք,

7. գրառումները հրատարակում ենք ընդունուած բնագրագիտական եղանակների կիրառմամբ՝ հարազատ մնալով բնագրի ուղղագրութեան՝ ուղղագրական շեղումները տալով ընդգծուած (italic), իսկ անհասկանալի եւ աղաւաղուած բառերին կից կոր փակագծերում նշելով ճիշտ ձեւերը,

8. վրիպած, չգրուած կամ ջնջուած գրերը վերականգնում ենք ուղղանկիւն փակագծերում,

---

[11] Գիտական տարբեր հաստատութիւնների եւ մասնաւոր անձանց։

[12] 2013 թուականից Հայաստանի ազգային գրադարանի հայերէն հնատիպ գրականութեան հաւաքածուն առանձնացուած եւ դասաւորուած է ժամանակագրական կարգով։

[13] Միայն Հայաստանի ազգային գրադարանի տարբեր ժամանակների կնքադրոշմները 12-ն են, որ կիրառուել են գրադարանի ստեղծման՝ 1919 թուականից առ այսօր։

[14] Առայժմ հաւաքել ենք կազմակերպութիւնների եւ անհատական հաւաքածուների մօտ 170 միաւոր կնքադրոշմ։ Անհատ անձերի, հիմնականում հոգեւորականների, կնքադրոշմները կրկնակի, եռակի շատ են։

9. անվերականգնելի, անընթեռնելի բառերի փոխարէն դնում ենք երեք թեք գիծ՝ ///, կասկածելի ընթերցումներին կից կոր փակագծերում դնում ենք հարցական նշանը (՞),

10. նիւթը կետադրում ենք արդի կանոնների համաձայն:

Ապագայում արդեն հրատարակուելիք «Դիւանի» հատորները կունենան նաեւ զանազան ցանկեր՝ Կազմակերպութիւնների, Անձնական հաւաքածուների, Տեղանունների, Նուիրատուների եւ Ստացողների, Վաճառողների եւ Գնորդների, Առք ու վաճառքի[15], Ձեռագիր եւ հատկապես մագաղաթեայ պատառիկներ ունեցող գրքերի[16] եւ այլն:

Ցուցիչ ցանկերի վերջնական քննութիւնը հնարաւոր է իրականացնել Հայաստանի ազգային գրադարանի հնատիպ գրականութեան եւ ոչ գրքային (քարտեզներ, հմայիլներ եւ այլն) հաւաքածուում առկայ ամբողջական նիւթը հաւաքելուց յետոյ, երբ աւարտին կհասցուեն էջադրման, ինչու չէ նաեւ սրբագրման աշխատանքները. մի խօսքով, երբ շարադրանքը վերջնական տեսք կունենայ:

Ստորեւ բերում ենք ապագայ աշխատութիւնից մի հատուած[17]:

3759-71,1894-ԱՀ
ՇԱՐԱԿՆՈՑ
Կ.Պոլիս - 1699 թ.

Մէջքին սոսնձած պիտակին. «5054 հայերեն»:

Տիտղոսաթերթը թափուած, լրացուած մեկ թերթով, մանուշակագոյն թանաքով բոլորգիր՝ «Շնորհօք ամենազօրին Աստուծոյ եւ ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... Օգնեա՛ Հոգիս Սուրբ, Աստուած ճշմարիտ, զսկսեալս մեր դու հաստ՛ յաւարտ», մատիտով՝ «5054», «1894-ԱՀ», «3759-71»:

Էջ 45, 65, 73 վր. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ անընթեռնելի:

Էջ 78-9 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «1876 ամենեքեան հաղորդեալ Քրիստոսի կենարար մարմարովն օգոստոսի /էջ 79/ ամենեքին խոստովանեալ եւ հարգեալ են ի կենարար մարմին ի Յիսուսի Քիրիստոսի մարմն///»:

Էջ 88-9 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Ամենեքեան հաղորդեալ են Քրիստոսի գերեզման Սոմոնոս քարէնէ /էջ 89/ Սեմոնոս քարէ Քիրիտոսի կերեզման»:

Էջ 104-5 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «1873 ամի 7ն յուլիսի նա կոչեցաւ Կալուստ Գիրիքոր Ասլան /էջ 105/ երկոքեան եւ նորա մայր Շամամ Կալոյեան»:

Էջ 105 վր. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «ՁՊղայտոս պատասխանի ետ այսորիկ»:

Էջ 112-3 ստ. լս. թանաքով նոտրգիր՝ «/// Մարքարայ Կեւորքեան Տէր-Խաչայտուրեան /էջ 113/ ստ. լս. ի կքոց Հայոց Մնացական Կարապետեան, զերիցփոխան Մանուկ Մանուկեան»:

Էջ 168-9 ստ. լս. թանաքով նոտրգիր՝ «1873 ամի 25 յունիսի /// Կումրի տէր Հակոբ քահանայ մեռաւ. վայ սայթե/// ժողովուրքէնէ մերմէ Դավիթ Պետրոսեան կամի /// /էջ 169/ ի նորին Բարձր արժանայպատիւ Երէվանու ք/// բնակիչ բարէկարք տէր Կէորգ Թաղի ///»:

Էջ 171. սեւ թանաքով նոտրգիր՝ «Այս Շարակնոցս նորոգուելին Ովանէսի գին Մարեան Գ. Սուրբ Երրորդութիւն երեկ անկամ եկաւ մեզ տեսաւ, մեք ճաշակեցանք մարմնաւ, որ նայ գերակրի անմահական սեղանօվն. ամէն: Ո՛վ քահանայ, ամենայն ժամ յիշեա՛յ Ովանէսի կին Մարեան, Աստուած քեզ եւ մեզ յիշէ. ամէն: Նգովածայ էն կարդացողն, որ ոչ յիշէ կամ ջնջէ,

---

[15] Այստեղ կարեւորում ենք նաեւ դրամական միաւորների տարատեսակները՝ ըստ տեղի եւ ժամանակի:

[16] Վաղ շրջանի հնատիպերում հանդիպում ենք ձեռագրերի մագաղաթեայ թերթերի, որոնք առանձին նկարագրութեան եւ ուշադրութեան են արժանի. դրանք հիմնականում օգտագործուել են գրքի նորոգութեան նպատակով՝ որպէս պահպանակ կամ կազմաստառ (օրինակ՝ Ուրբաթագիրք, 1512 թ., Պարզատումար, 1513 թ.):

[17] Բերուած հատուածը ընդգրկում է 1699-1702 թթ. այն տպագրերի համար արուած մեր աշխատանքը, որոնք առաւել ամբողջական են տալիս աշխատանքի ընդհանուր պատկերը:

նզովեալ լիցին, մասն եւ բաժին Յուքային եւ ընդ Կայէնին առցէ, ընդ Քրիստոսէ անմասն մնան, օրհնեալիայ էն քահանայէն, որ յիշէ եւ ողորմի ասէ, Աստուած զձեզ ողորմի ամէն հոգոցն. Հայր մեր, որ յերկինս ասէ»:

Էջ 201 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «1878 ամի օգոստոսի 6ին ///»:

Էջ 226 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Վարդան Խանոյեանէ (ստորագր). եւ Անտոնեան Յակոբ (ստորագր.)»:

Էջ 293 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Ի նորին բարձր պատիւ ///»:

Էջ 328 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Կնքպիայր Մանուկ աղա /// Յակոբ քահանայէ ///»:

Էջ 420. սեւ թանաքով նոտրգիր՝ «Յիշատակ է Շարական տէր Խաչատուրին եւ Յովանէսին, կողակից Մարիամին, որ տվինք յիշատակն Դաշտի Խաչի յեկ[եղեցւոյ], տէր Մելքիսէթ քահանայիդ Աստուած մի բերան ողորմի ///»:

Էջ 469-70 թափուած, լրացուած մեկ թերթով սեւ թանաքով նոտրգիր՝ «Որ զլոյսն ի սկսբանէ հաստատեցեր վերըստին... եւ հեղմամբ արեան իւրեանց նորոգեցին զաշխարհս, դասաւորեալք ընդ անմարմնոց»:

Էջ 471ի ներքին լս. թափուած. լրացուած 3/4 թերթով, սեւ թանաքով նոտրգիր՝ «բազմութիւն... գոհութեամբ»:

Էջ 471. սեւ թանաքով նոտրգիր՝ «Հասուսցէ Մանուկ Նազարէ ավէտօք ավէտօք կենդանեա եւ մեռաե/// Մարգար, Կեւ[ո]րքեան Մանուկ կաչար Սաֆար Պետրոսեան, կաչար Սաֆար Պետրոսեան, ///Աթօ Լազարեան, Կալուստ Պէ/// Հաղվէրդե[ան], տէր Օհանէս Կէւոր[գ]եան Թաթէոս»:

9982-57, 1656-ԱՀ
ՄԱՏԹԷՈՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,
ՈՍԿԵԱՅ ԴՈՒՌՆ ԴՊՐԱՏԱՆ
Ամստերդամ - 1699-1700 թթ.

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով շղագիր՝ «Մատթեոս Վանանդեցի»:

Անուանաթերթին. կապոյտ թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ՍՍՀ»:

Անուանաթերթի դարձերեսին՝ մանուշակագոյն թանաքով՝ «37+491.99-8», սեւ թանաքով շղագիր՝ «Ի գրոց Կարապետի Մերովբեանց, Հմր 70», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «Ի ՅԻՇԱՏԱԿ ԻԻՂԱԲԵՐ ՄԵՐՈԲԵԱՆ-ԻՆՃԻԿԵԱՆԻ 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ»:

9983-57, 1659-ԱՀ
ՄԱՏԹԷՈՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,
ՈՍԿԵԱՅ ԴՈՒՌՆ ԴՊՐԱՏԱՆ
Ամստերդամ - 1699-1700 թթ.

Մէջքին սոսնձած պիտակին. թանաքով՝ «282»:

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/1235»:

Ա. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «տ. 282 / թ. 1256»:

Ա. պահպանակի բ. երեսին՝ «Թէոդիկի մատենադարանին կը նուիրէ սոյն գիրքը Մն. Նորիկեան. 26 օգոս., 9 սեպտեմբեր 1914, ի Նշան թաղ. կարմիր մատիտով՝ «100», մանուշակագոյն թանաքով քառանկիւն կնքադրոշմ՝ «ՀԱՅԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / ՀԱՄԱՐ»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «1235», մատիտով՝ «1659-ԱՀ», կարմիր թանաքով առանց շրջանակ կնքադրոշմ՝ «Printed in Turkey»:

8259-57, 486-ԱՀ
ԹՈՄԱ ԳԵՄԲԱՑԻ,
ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՀԵՏԵԻՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ.Պոլիս - 1700 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. «I/ 151»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «486-ԱՀ», «1700 թ.»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն եւ կապոյտ թանաքով՝ «151 ստ.», կապոյտ թանաքով՝ «8259-57», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Սիսն ու Մասիսը՝ ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝ «Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ՍՍՀ»:

Էջ 352. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ՍՍՀ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՀՄ»:

Բ. կազմաստառին. սեւ թանաքով նոտրգիր՝ «Թվին ՌՄԶ.ի (1831) մատիմ այս է զօրութիւն գրուս, Աստուծոյ է Նիկողոսի որդ[ի] Գաբ[ի], էլի վեր առի, պարտ եմ Օվանէս որդ[ի] Մարքարին եւ թանապաք գրիս, ///արեպէս մինչեւ /// տրին ///ատայ անպատճառ ///ամ այլեւ վայութիւն չանեմ, հագեմ, չի ձգեմ, թէ հագիմ ձգեմ, չանեմ դուլ տն/// տիրացուս ///», կապոյտ թանաքով՝ «340 ///»:

8807-57, 487-ԱՀ
ԹՈՄԱ ԳԵՄԲԱՑԻ,
ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՀԵՏԵԻՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ.Պոլիս - 1700 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/ 535», մատիտով՝ «Հմր 201», սեւ թանաքով նոտրգիր՝ «Մաղաքի որդի Ըստեփան», մանուշակագոյն թանաքով՝ «2000»:

Ա. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով նոտրգիր՝ «Նահապետի դուստր Պիրիճիտան ընծայեցաւ եւ ծնաւ աշխարհ ի թուին ՌՃՂ. (1741) Յունվարի ԻԷ. (27): Եօթն երեակն էր Դ., գիր տարուն էր Ը., վերադիրն էր ԻԲ. (22) եւ տանուտէրն էր Աղեղնաւորն, եւ օրն էր չորեքշաբաթ: Եւ դազուխճի Հիւսէփն փաշային, որ ըսպաննեաց Թօրուն աղան, Ղուրպան աղան եւ Մ[ի]ռատ օղլին, եւ վերջապէս փաշային վռնդած եւ թօփած օրն էր, եւ առաջնորդութեան-Սահակ վարդապետին, եւ ես՝ Յովսէփ վարդապետս գրեցի»:

Ա. պահպանակի բ. երեսին. սեւ թանաքով նոտրգիր՝ «Թուին ՌՃՀԸ. (1729) ծնաւ Յովսէփն, Հոկտեմբերի Ա. որդի Նահապետին եւ Աննային, կնքահայրն է Եղիայն՝ Էզէկի որդի: Թուին ՌՃԶԴ. (1735) Հ[ի]ոկտեմբերի Ա. ծնաւ Խաթունբէկին՝ դուստր Նահապետին եւ Աննային, կնքահայրն է Եղիայն՝ Էզէկի որդի: Թուին ՌՃԶԵ. (1736) Օգոստոսի Ի. (20) ծնաւ Ճովանին՝ որդի Նահապետին եւ Աննային, կնքահայրն է Եղիայն՝ որդի Էզէկին: ՌՃԿԱ. (1712) եւ Յունվարի Զ. ծնայ եւ աշխարհ եկեալ եմ ես՝ Յակոբի դուստրըս՝ Աննաս: Թ[ի]վին ՌՃՅՂԴ. (1745) Դեկտեմ[ի]բերին Բ. ծ[ն]նա[ւ] Սեխպուրն՝ որդին Հապետին եւ Աննային կընկպրն ///»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «535», կապոյտ թանաքով՝ «ստ.», մատիտով՝ «61», մատիտով՝ «8353, Հմր 261»՝ ջնջած, կապոյտ թանաքով՝ «8807-57», մատիտով՝ «487-ԱՀ», «1700, Կ.Պոլիս», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ՍՍՀ»:

Էջ 152 ստ. լս. սեւ թանաքով յոթնաթերթ բոլորակ կնքադրոշմ՝ անընթեռնելի, մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՀՄ»:

7858-56, 2043-ԱՀ
ԹՈՄԱ ԳԵՄԲԱՑԻ,
ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՀԵՏԵԻՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ.Պոլիս - 1700 թ.

Մէջքին. «1013»:

Ա. փեղկին սոսնձած պիտակին. «24/Թ-75»:

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/4444»:

Ա. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «1426»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «117», սեւ թանաքով՝ «Հմ 123, Հմ 1387»՝ ջնջած, «49», սեւ թանաքով նոտրգիր՝ «3 մանէթ, ընծայեալ Յարութիւն Չուղայեցի Նուպարովն Մօվսցովկիին 1807ին, Աստրախան», կապոյտ մատիտով՝ «Կ. Պոլիս, 1691»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «1013=594», «4444», մատիտով՝ «2043-ԱՀ», «1691», մանուշակագոյն թանաքով եռանկիւն կնքադրոշմ, որի վերին անկիւնում աստղ եւ նրանից դուրս եկող ճաճանչներ՝ «ՊԵՏ / ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ 51 լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Այսինքն եկեղեցին է քաւարանն մեր ըստ հաւատոց ազգիս հայոց»:

Էջ 338 ստ. լս. «Յիշեա՛ զՄկրտիչ Եզեան նորընծայ»:

ՄԻԱԿԱԶՄ (502, 503)
8328-57, 502-ԱՀ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
Կ. Պոլիս - 1700 թ.

Ա. կազմաստառին. սեւ թանաքով նոտրգիր՝ «Գրեցաւ գիրս Հոկտեմբերի ԺԵ. (15) չօրեքշաբ[թ]ի Ե. սահատին»:

Ա. պահպանակի բ. երեսին. կապոյտ մատիտով՝ «419»:

Բ. պահպանակի ա. երեսին սոսնձած թղթին. մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Գիրք մեկնութեան Յայտնութեանն Սրբոյ Յոհաննու աւետարանչի, Կ. Պոլիս 1700»:

Բ. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «7438», կապոյտ թանաքով շղագիր՝ «Գիրք Մեկնության Հայտնությանն սրբո Յոհաննու աւետարանչի, Կ.Պոլիս, 1700, ալիգ.», մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Խաչատուր վարդապետ Էրզրումցի, Մեկնութիւն յԵրգոց երգոցն Սողոմոնի», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.»:

Էջ 6. սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ԱԲՐԱՀԱՄ»:

Էջ 7-11 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Յիշատակ եղաւ ի սուրբ Աթոռն Աղթամարայ սուրբ մատեանս Յայտ/էջ 8 /նութեան Յիսուսի Քրիստոսի եւ Երգ երգոց Սողոմոնեան ի հանգուցեալ Յարութիւն վարդապետէ ի վայե/էջ 9/ լումն միաբանաց, ապա մի ոք համարձակեսցէ իւրացուցանել /էջ 10/ կամ այլոց տալ եւ վաճառեսցէ, եւ եթէ հանտկնեսցէ, առցէ պատիժս ըստինքեան չար խորհրդոց, 1872»:

Էջ 126. մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ (կապգրով)՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՅՕՀԱՆԷՍ»:

8327-56, 503-ԱՀ
ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑԻ,
ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ ՍՈՂՈՄՈՆԻ
Կ.Պոլիս - 1700 թ.

Էջ 256. մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ», մանուշակագոյն թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ / ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ / ՌՅԺԳ. - 1864», մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «1889 Յունվ. 4: Ի յիշատակ յաւերժական մատեանս, ն. վեհափառութիւն տ. Խաչատուր կաթուղիկոս Ռշտունցին ետ շինել եւ զետեղել ի թանգարանի /էջ 257 ս. Աթոռոյս, զոր ինքն կառոյց եւ ճոխացոյց բազմազան մատենիւք, զորս ետ հաւաքել ի խորշից սենեկաց եւ /էջ 258/ գաւառաց, յորս մատնեալ կային յապականութեան», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ « ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

Գ. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով նոտրգիր՝ «37. Էլիազ Մխիթարով, որդիք նորայ՝ 1. Բաթօ, 2. Սահակ, 3. Սիմօն, որդիք Բաթօյին՝ 1. Գալուստ, 2. Համբարձում, 3. Օվնաթան: 38. Բաբայ Մելիքսետով, որդիք նորայ՝ 1. Մանուկ, 2. Մելիքսետ»:

Գ. պահպանակի բ. երեսին. մանուշակագոյն թանաքով շղագիր, հակառակ դիրքով՝ «Գրչափորձ, Գրիգորեան Ներսէս, Գրիգոր Իւսկիւրտացի, Կ.Պօլսոյ Պէշիքթաշ»:

Բ. կազմաստառին. սեւ թանաքով նոտրգիր, հակառակ դիրքով՝ «67. Յարութիւն քահանայ Տէր-Յակոբեան - 52, որդիք նորայ՝ 1. Հայրապետ - 29, 2. Գէորք - 16, 3. Յուսէփ - 13, ունի որդի Հայրապետ, Վահան - 5: 68. Տիրացու Ստեփանոս, տիրացու /// 32 եղբայր նորա Օհանէս - 22», «6, 19»:

ՄԻԱԿԱԶՄ (504, 505)
8269-57, 504-ԱՀ
ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑԻ,
ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ ՍՈՂՈՄՈՆԻ
Կ.Պոլիս - 1700 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/155»:

Բ. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «52» ջնջած, «155», կապոյտ մատիտով՝ «54» ջնջած, սեւ թանաքով նոտրգիր՝ «Էնկիւրցի Սուճույի որդի Յարութիւնն, Գրիգոր Յախբեան», «այբուբեն՝ բ-յ. Մանուէլ»:

Բ. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «7739», «504-ԱՀ», մանուշակագոյն թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ / ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ / ՌՅԺԳ. - 1864», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР», մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Ի յիշատակ յաւերժական ն. վեհ. տ. Խաչատուրս. կաթուղիկոս յիւրմէ կողմանէ ընծայեաց ս. Աթոռոյս թանգարանի[ն], զոր ինքն էր կառուցանել, 1889 Յունվար 9»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն եւ կապոյտ թանաքով՝ «155 ստ.», կապոյտ թանաքով՝ «8268-57», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.»:

Տիտղոսաթերթի դարձերեսին. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ 4 ստ. լս. սեւ թանաքով շղագիր՝ «Ի Գրիգոր վարդապետէ Շատախցւոց յիշատակ եղաւ ի սուրբ Աթոռն /էջ 5/ Աղթամարայ, ով որ չար մտօք հայեսցի, երկու աչօք կուրասցի»:

Էջ 17. «155», «8269-57», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա.ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝«ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

8270-57, 505-ԱՀ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
Կ. Պոլիս - 1700-1701 թթ.

Տիտղոսաթերթին. վերին լս. մանուշակագոյն թանաքով՝ «155ստ», «8270-57», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝«ՍԱՐԿԱՒԱԳ ՄԵԼՔՈՆ 1191 (1742)»:

Տիտղթոսաթերթի դարձերեսին. մատիտով՝«225»:

Էջ 208 ստ. լս. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝«ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա.ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР», « ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՍԱՐԿԱՒԱԳ ՄԵԼՔՈՆ 1191 (1742)»:

3621-51, 511-ԱՀ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
Կ. Պոլիս - 1700 թ.

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝«511-ԱՀ»:

Տիտղոսաթերթին. մատիտով՝«3563», սեւ թանաքով շղագիր՝«Յամի Տեառն 1815 գնելով ստացեալ եմ ի Բասրա, որ եմ Կարապետս Յովհաննէսեան», սեւ թանաքով լատինատառ՝ «Manase Sleqanis 1771»՝ջնջած:

9005-57, 1577-ԱՀ
ԳԻՐՔ ՄՏԱԾԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ
Կ. Պոլիս - 1701 թ.

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝«1577-ԱՀ»:

Էջ 3 մատիտով նոտրգիր՝«Պետրոս վարդապետ Թիֆլիսեցի, Մտածական, Պոլիս, ՌՃԾ. = 1701», «ուն. 922». կապոյտ թանաքով՝«3005-57», մանուշակագոյն թանաքով՝«ուն 922», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝« ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

Էջ 128. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝«ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

8073-57, 77-ԱՀ
ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
Լիվոռնո - 1701 թ.

Ա. պահպանակի ա. երեսին. կանաչ թանաքով՝«24-ԱՀ»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝«77-ԱՀ», կապոյտ թանաքով՝ «8073-57»:

Տիտղոսաթերթին. վր. լս. կապոյտ թանաքով՝«201 ստ», «24 ստ», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Միսն ու Մասիսը՝ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝«Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝«ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ՍՍՀ»:

Չh. էջ 3. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝«ԳԻՐՔՍ / ՍՈՒՐԲ ԷՋՄ/ԻԱԾՆԱ Է», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Միսն ու Մասիսը՝ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝«Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»:

Էջ 239. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝«ԳԻՐՔՍ / ՍՈՒՐԲ ԷՋՄ/ԻԱԾՆԱ Է»:

8100-57, 78-ԱՀ

ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիվոռնո - 1701 թ.

Կազմաստառին սոսնձած պիտակին. «I / 691»:

Չh. էջ 2. մատիտով՝ «201 ստ.», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝«ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ 3. չh. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՊԵՏՐՈՍ ԹՎԻՆ ՌՃՂԵ. (1746)»:

7782-56, 79-ԱՀ

ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիվոռնո - 1701 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/4644», մատիտով՝«81», «79-ԱՀ», սեւ թանաքով՝ «4644, մատիտով՝ «Ա/1+16», «Բ/1+25», «215b»:

Էջ 17. մանուշակագոյն թանաքով՝«1688=5801», «7782-56», կապոյտ թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Միսն ու Մասիսը՝ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝«Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝«ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ. 30, 128 ստ. լս. կապոյտ թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ մէջտեղում բացուած գիրք, շուրջբոլորը՝«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Հ. ՃԵՄ. Մ. Ա. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ / 1874-88»:

Էջ 222 ստ. լս. սեւ թանաքով երկաթագիր՝«ՄԱԹԷՈՍԻՎ»:

8101-57, 80 (274)-ԱՀ

ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիվոռնո - 1701 թ.

Էջ 3h հիմքին սոսնձած թղթին. մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Թէոփիլոս, այսինքն Խօսակց[ութիւն] Թէօփիլոսի ընդ վարդապետին. Ալիկօռնայ,1701», մատիտով՝«80-ԱՀ»:

Էջ 3. սեւ թանաքով շղագիր՝«1880 թ. ի գրոցն Ազիզ Էղազարեանցն», ստ. լս. հակառակ դիրքով, «Ճանպուլատ Խանումե…» մանուշակագոյն թանաքով՝«552», կապոյտ թանաքով՝ «201»:

Էջ 4 վր. լս. «ստ. 201», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝«ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

էջ 5. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР», մանուշակագոյն թանաքով՝«552», մատիտով՝«129»:

էջ 92 վր. լս. սեւ թանաքով նոտրգիր՝«Ես՝ Յուսէփ գրեցի»:

էջ 158 լս. սեւ թանաքով նոտրգիր՝«Այբուբեն՝ա-թ, ես Յակ.»:

էջ 193 ստ. լս. «Ճանապարհ[ի] գնայցուցաց»:

էջ 2. կապոյտ թանաքով՝ «1475-2005», մանուշակագոյն թանաքով քառանկիւն կնքադրոշմ՝«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՀԱՄԱՐ», սեւ թանաքով նոտրգիր՝«Եւ օվ քուսանք եւ վարդապետ աստուածաբանք եւ ժողովուրդ»:

էջ 14 լս. սեւ թանաքով նոտրգիր՝«Աստուած անէ արթար մարթն, Աստուած անիծէ չար մարթն, է գնշան Քրիստոս Աստուած ///»:

էջ 15. կապոյտ թանաքով՝ «1475-2005», մանուշակագոյն թանաքով քառանկիւն կնքադրոշմ՝«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՀԱՄԱՐ»:

էջ 16. սեւ թանաքով նոտրգիր՝«Հազար բարով», «Չէ այս անիծէիր ապապնահայ Ակօբ-ջան եւ աչք Արութ /// ետես տալու ///»:

Վերջին էջ. սեւ թանաքով բոլորգիր՝«/// յաւիտենական բարերար /// ամենակալ ստեղծիչ լուսոյ եւ յօրինիչ գիշերոյ, կեանքի, մահու եւ /// յոյս ակնունօղաց, ետ լայնամտութիւն տարա-կուսանաց, որ ամէն արուեստ իմաստութեան դարձուցանես յայգ զաստուեր մահու աննուազ ծագ/// /// արեգակն, քանզի ոչ ///օրէ ծածկող զփառս տէրութեան քոյ /// գիշերոյ, որում կրկնի ծու/// երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդար/// կամաց, որ լսես զհեծու/// յաղօթս խոնարհաց /// յոյսն դրուած ///», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

էջ196 լս. «Յուսէփից օրա»:

8431-57, 1911-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝«II/294»:

Ա. պահպանակի ա. երեսին՝ մատիտով՝«Հմր 5», «Հմր 294», «4», կապոյտ մատիտով՝ «131», մանուշակագոյն թանաքով ուղղանկիւն կնքադրոշմ՝ «ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ / ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻԷՐ / ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՑ / 18 ՆՈՅԵՄ. 1918 Թ. ԹԻՖԼԻՍ»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «1911-ԱՀ», «Գրիգոր Նարեկացի Կ. Պոլիս. 1701»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «294 ստ.», մատիտով՝«891.99/Գ-89»,- կա-պոյտ թանաքով՝«8431-57», մանուշակագոյն թանաքով ուղղանկիւն կնքադրոշմ՝ «ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ / ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻԷՐ / ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՑ / 18 ՆՈՅԵՄ. 1918 Թ. ԹԻՖ-ԼԻՍ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

1302-50, 1912-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝«II / 347»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝«891.99/Գ-89», «1912-ԱՀ»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «347», մանուշակագոյն թանաքով ձուաձիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.», նրք. լս. մատիտով՝ «243/Գ-89», մանուշակագոյն թանաքով՝ «1302-50»:

Էջ ը. վր. լս. մանուշակագոյն թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ / ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ / ՌՅԺԳ. - 1864», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ»:

Էջ թ ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Այբուբեն՝ ա-պ»:

Էջ ժ-ժա. վր. լս. սեւ թանաքով շղագիր՝ «Ի յիշատակ յաւերժական. Նորին վեհ. տ. Խաչատուր ս. կաթողիկոս գետեղել ետ զմատեանս ի թանգարանի ս. Աթոռոյս, /էջ ժա/ զոր ինքն կառոյց 1889 յունվար 2»:

Էջ լբ. լս. մանուշակագոյն թանաքով նոտրգիր՝ «Այս Նարեկ Նշանին է»:

Էջ. գճիզ, դճզ. մանուշակագոյն թանաքով նոտրգիր՝ «Այս Նարեկ Նշան Տէր-Կարապետեան»:

8434-57, 1913-ԱՀ,
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. պահպանակի բ. երեսին. կապոյտ թանաքով շղագիր՝ «Ի 1879 ամի օգոստոսէն սկսեալ ցորենի խալվարն 44ից ռուբլուցն բարձրացաւ մինչ դեկտեմբեր 75 ռուբլի, հետզհետէ բարձրանալով մինչ ի ութսուն թիւ 90 խալվար ցորեն, 95 ալուր, որ գրում է այստեղ: Ի հազար ութ հարուր ութսուն ամի յունվարէն սկսեալ եղեւ մեծ թանգութիւն, ցորենի խալվարն ելաւ ինուսուն ռուբլի, գարու խալվար եօթանասուն ռուբլի, ալուրն ինուսունհինգ ռուբլի, Աստուած խնայէ դժուար միջոց է: Այս դժուար միջոցին ողորմած կայսր ուռուսաց ետ իւր ամբարներից փողոցի հացթուխներին ձեռամբ քաղաքի գրաւնի եւ խոստացաւ տալ բոլոր չքաւորացն իւրաքանչիւր համարով անձանց»:

Բ. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «891.99/Գ-89», «1913-ԱՀ», «66» ՝ջնջած, մանուշակագոյն թանաքով՝ «5011», կապոյտ թանաքով՝ «8434-57»:

Տիտղոսաթերթին. կապոյտ թանաքով՝ «501 ստ.», սեւ թանաքով շղագիր՝ «Ի Ապարանի տեառն Նահապետի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց եւ հայրապետ», մանուշակագոյն թանաքով՝ «Թ. 1701»:

Էջ բ. վր. լս. մատիտով՝ «243», «1913-ԱՀ», մանուշակագոյն թանաքով ձուաձիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ գ. կապոյտ թանաքով՝ «8434-57», «Յանք գրոց Նարէկայ»:

Չհ. էջ ժէ. սեւ թանաքով շղագիր՝ «Պարսից Մուզաֆերեդին շահն մայիսի 11ին 1900 ամին եկաւ Երեւան: 12ին ընդունելութիւն վեհափառ Մկրտիչ կաթուղիկոսին, ժամի մէկին յուսադպափ կարկուտ չտեսնուած մեծ վնաս այգեստանին եւ բուսոց, 13ին օրն շաբաթ շահն ճանապարուեց դեպի Ախստափայի վագզալն», մանուշակագոյն թանաքով՝ «501», մանուշակագոյն թանաքով ձուաձիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ իէ. սեւ թանաքով շղագիր՝ «1873 ամի 28 յունվարի ես ձեռնադրուեցի ձեռամբ Մկրտիչ արքեպիսկոպոսի, Մկրտիչ քահանայ տէր Պողոսեան»:

Էջ ճժթ լս. սեւ թանաքով շղագիր՝ «Տէր Յիսուս Քրիստոս, տէր երկնի ու երկրի արարիչ ամենայն արարած[ոց]»:

Էջ ճհթ ստ. լս. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «//// ԳՐԻԳ////»:

Էջ բՃ լս. սեւ թանաքով շղագիր՝ «/// յաւուրն լիս շաբաթ ի խռովութեան աշխար[հ]ի ուռուսաց կամ օսմանցվաց խօնտկեսցի թագաւորին եղեւ նոյն ամի»:

Էջ բՃիա. սեւ թանաքով շղագիր՝ «Տէր Աստուածատուր Տէր-Մատթէոսեանց 1873 յ7ն հոկտեմբերի հանդիպեցաւ ի տուն /// (շարուակութիւնը վր. լս.ում, որը կտրած լինելու հետեւանքով անընթեռնելի)»:

Էջ ԲՃՂԶ. սեւ թանաքով շղագիր՝ «Պարոն Բեկ Մկրտիչեան Թորոսեանցս գրեցի 1867 ամի 3ն օգոստոսի ի սուրբ Աստուածածին այս թվին մեր»:

Էջ ձգ լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Սիմօն Տէր-Պօղոսեան»:

1303-50, 1914-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «II/593»:

Ա. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով շղագիր՝ «Յովակիմ Տէր-Գէորգով подписали этого вышеподписанный», «Эта кн[ига] принадлежитъ Теръ Кеворку Айвазовичу», հակառակ դիրքով՝ «Եփրեմ, Տէր Գէորգեան», շղագիր՝ «Այս գիրքը պատկանում է Գէորգ քահանայ Տէր-Գէորգեանին եւ իւր որդոյ՝ Սենիքերիմ Տէր-Գէորգեանցին: 1817 ամի 1 յունվարի»:

Ա. պահպանակի բ. երեսին. սեւ թանաքով շղագիր՝ «Աղօթք պատարագէն առաջ, 4. 5. 24. 33. 47. 52. 53. Աղօթք զկնի պատարագին, գլուխ 1. 5. 24. 67. 95: Կ.Զ. աղօթք»,-«Մայիսի 14ին 1876 ամի Երեւանու միրավոյ ատեանն վճռեց մի ամիս ժամանակին Ասլան Սարգիսովն տայ ինձ 21 մանէթ 70 կոպեկ», «1878 ամի փետրվարի մէկին Յովակիմն տվեց 45 մանէթ Կասպար Էյլասովին իւր թամանտրուկի (՞)մասին», «1900 ամի 8ն ծնուեցաւ 14/// Սրբ.ունի Մկրտիչեան տ[է]ր ///»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «593», մատիտով՝ «1914-ԱՀ», մանուշակագոյն թանաքով՝ «1303-50», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀԱԽՀ-ՍՍՀ»:

Էջ բՃխթ վր. լս. սեւ թանաքով շղագիր՝ «Ս[ենիքերիմ] ք[ահանայ] Տ[էր]-Գէորգեանց», լս. մատիտով շղագիր՝ «Աթանէս ք[ահանայ] Տ[էր]-Գ[էորգեանց]»:

8433-57, 1917-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ. Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած թղթին. մանուշակագոյն թանաքով՝ «II/1494»:

Ա. կազմաստառին. սեւ թանաքով շղագիր, սլավոնատառ՝ «Въ библіотеку Лазаревскаго Института приношени Ихъ Превосходительство Г.г. Попечителей Института. Молитвенная древняя Армянская книга, напечатанная въ Константинополе. Заглавіе по-Армянски: “Нарекъ” Боговдохновленное сочиненіе Св. Григория Нарекьанцы».

Բ. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով շղագիր՝ «Յիշատակեցաւ մատեանս այս յարժանապատիւ Եփրեմ վարդապետէ՝ դպրայ Ստեփաննոս Դաւթեան Մերճանեանցն Գրիգորիոպոլսեցւոյ, ի 1836 թ. սեպ. 18, ի մայրաքաղաքն Ս. Պ. Բուրգ»:

Բ. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «891.99/Գ.89», «1917-ԱՀ»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն եւ կապույտ թանաքով՝ «34 ստ», «1497», «1494 ստ», «ԲՃԻԹ. (229) կիկագուկան խեղայք», մատիտով՝ «1917-ԱՀ», «56/1», մանուշակագոյն թանաքով՝ «8433-57», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «Հ.Խ.Ս.Հ. ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. П. БЛБ-КА АРМ ССР ИМ. А. МЯСНИКЯНА / ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՓՈՆԴ - ОБМЕННЫЙ ФОНД», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ՍՍՀ»:

Էջ բ.ի ստ. աջ անկիւնը թափուած. լրացուած թերթով, սեւ թանաքով բոլորգիր՝ «նորա... զաստուածայինն»:

Էջ թ. թափուած. լրացուած մէկ թերթով, սեւ թանաքով բոլորգիր՝ «Բանք առ ի ապաքինութիւնս իրաց իրաց Աստուծոյ... Բանք առ ի յերջանիկ փայտն Ժամհարին»:

Էջ ժա. թափուած. լրացուած մէկ թերթով, սեւ թանաքով բոլորգիր՝ «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ. Բան Ա... կամաւորական նուէր բանական զոհիս ողջակիզեալ զօրութեամբ»:

Էջ 17. կապոյտ թանաքով՝ «8433-57», «1494», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ՍՍՀ»:

5409-56, 1918-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Էջ բ. մանուշակագոյն թանաքով՝«5409-56»:

Էջ ժ. ստ. լս. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ (կապգրով)՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ / ///»:

Էջ ժա. սեւ թանաքով շղագիր՝«[դա]տաստանի փրկութիւն ///»:

Էջ գճժը. ստ. լս. սեւ թանաքով բոլորգիր՝«Ո՛չ քամահիս»:

Չի էջ ա. սեւ թանաքով նոտրգիր՝«Ես՝ աստապատեցի մահտեսի Դաստոսի որդի Էվանէսըս առի այս Նարեկըս ի ձեռանէն այլազգաց, էն վախտըն էր, որ Քայիայ Իբրահիմ փաշէն շատ զօռով ասկար հավաքէց լազկի օսմանլու, մինչեւ ԺԵ. (15) հազար լէշկարով գնաց Սղնաղին վերայ, շատ եկեղեցի թալանեցին, կուսանք, աշխարհականք շատ գերի արին, այս Նարեկըս գերի էր ընկել, Գ. դուռուշ տվի առի, այս չանր բանս Գէնջու քաղաքըն ելաւ, նեղութիւնն շատ կրեցին քըրիստոնէան, ով որ այս աղօթայգիրըս կարթայ, աղայչել առ միածին որդին, որ ազատել ըզմեզ եւ ըզձեզ ի ձեռանէն այլազգաց, աստ եւ ի հանդերձելումըն երկնից արքայութեանն արժանի արասցէ: Գրեցաւ ձեռացայգիրըս թվին ՌՃՀԹ.ին (1730) յուլիսի ամսոյս Զ.ին Քրիստոսի մարդայսիրութեանն փաքր. ամէն»:

Չի էջ բ. սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ / ԾԱՌԱՅ ԹՕՎՄԱ/Ս ՎԱՐԴԱՊԵՏ ՄՊԱՍԱՒՈՐ / ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ / ՌՃԻԴ. (1675)»:

Էջ ճԵդ. ստ. լս. սեւ թանաքով շղագիր՝«Խեչօից ապրելի ԺԳ.ին (13) գիններեցի»:

Էջ ճԻզ. սեւ թանաքով նոտրգիր՝«1824 ես՝ Պուլուգեան Սահակս եւ իմ որդէգիր Թորոսս զայս սուրբ Նարեկս տաք յիշատակ Սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ, ի վայելս քահանայից»:

Էջ ճԾ. սեւ թանաքով շղագիր՝«1860 ամի 4 յուլիսի Վարդանի ծնունդ», ստ. լս. «Այս Պօղոս», մատիտով շղագիր՝«Տե՛ս անձեռնմխ.», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝անընթեռնելի, մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

SUMMARY

The beginning of the Armenian printed book is a new era for Armenian writing and literature. It has completely inherited all the traditions of manuscripts. Remember that throughout the sixteenth and nineteenth centuries, printed and handwritten literature coexisted and served the public. Ancient books,

like manuscripts, have handwritten remarks by historical masters, library inventory numbers, and other different kinds of notes in the margins, on free pages. Seals hold equal significance to these.

In addition to being a unique source for printing, the compilation of handwritten and library notes found in the National Library's ancient books is also an excellent source for research on history in general, and culture history in particular.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկեան Տ., Սարգսեան Ք. Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր եւ գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) // Բանբեր Մատենադարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ., հ՝ 34, Երեւան, 2022, էջ 330-349:
2. Հայ գիրքը, 1512-1800 թթ. / կազմ.՝ Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սավալեան, խմբ.՝ Ռ. Իշխանեանի, Երեւան, ՀՍՍՀ պետական գրադարան, 1988, 864 էջ:
3. Տէր-Վարդանեան Գ. Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների եւ գրադարանային նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը // Բանբեր Մատենադարանի, հ՝ 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ., 2022, Երեւան, էջ 321-329: